նրանց թոականը, նրանց տապանագիրը դրոշմած են ամէն մի զգայուն հայ մարդու սրտի մէջ: Ժամանակները քարը մաշեցին, գիրը ջնջեցին, բայց սրտերի մէջ անեղծ մնաց նա: Այդ երկու փոքրիկ տապանների մէջ հանգչում են երկու հոյակապ անձինք՝ Մովսէս Խորենացին եւ նրա ընկեր Մամբրէ Վերծանողը: Հայաստանը յոյն եւ հրէայ սուրբերի անունով տաճարներ կանգնեց: Բայց այն մարդը, որ իր գրքով ազատեց Հայաստանը պատմութեան մահից, որ կեանք եւ անմահութիւն տոեց նրան, ինքը մի փոքրիկ մատուռ անգամ չստացաւ հայրենի աշխարհի գրկում... Այդ տապաններից փոքր-ինչ հեռու, մեկուսացած էր մի այլ տապան, աւելի անխնամ, աւելի տխուր, քան թէ առաջինները: Լեռնային Հայաստանը իր լեռների ընտիր քարերից մէկն անգամ խնայեց դնել նրա վրայ: Անտաշ ապառաժների մի քանի բեկորներ ծածկում են պաշտելի մարդու սրտակոտոր դամբարանը: Անբա՛խտ վրճակի անբա՛խտ հակադրութիւն: Այդ մարդը իր կեանքում իր ժամանակի կղերից հալածուեցաւ, քարկոծուեցաւ, եւ այժմ նրա դամբարանը նոյնպէս ճնշուած է անկարգ քարակոյտի ներքոյ: Բայց ամէն մարդ, երբ կլսէ Ղազար Փարպեցու անունը, խոնարհութեամբ ծունր կդնէ եւ կհամբուրէ նրա դամբարանի փոշիները... Այդ դամբարանի վրայ հեռոից տխուր կերպով նայում են Սահակ եւ Համազասպ իշխանների շիրիմները...

Վանքի շրջակայքի յիշատակարանները այնքան ժամանակ խլեցին մեզանից, որ բոլորովին մութն էր, երբ մտանք վանքը: Վանահայրը չգտնուեցաւ. մեզ ասացին, որ նա գնացել է մերձակայ գիւղը: Ասլանը ուղղակի դիմեց դէպի խուցերից մէկը, որի նեղ լուսամուտից ճրագի լոյս էր երեւում: Դուռը բաց էր թողած՝ օդ ներս տանելու համար: Մի հասարակ, անգոյն սեղանի վրայ վառւում էր ճրագը եւ լուսաւորում էր դէմքը մի վանականի, որ այդ միջոցին, սեղանի վրայ թեքուած, ինչ-որ գրում էր: Սեղանի երեսը ծածկուած էր գրքերով, որ անկարգ կերպով դիզուած էին միմեանց վրայ: Երբ նկատեց նա մեր ներս մտնելը, ամենեւին չշարժուեցաւ իր տեղից, միայն ձեռքը մեկնելով Ասլանին, սառն կերպով ասաց.

— Ես ձեզ սպասում էի, պարոն բժշկապետ:

Յետոյ, երբ նկատեց, որ մենք ոտքի վրայ մնացինք, աւելացրեց.

— Իմ խուցը այնքան նեղ է, եւ կարասիքը այնքան սակաւ, որ չգիտեմ որտեղ հրաւիրեմ ձեզ նստելու:

— Դուք հանգիստ եղէք, մենք նստելու տեղ կը գտնենք, — ասաց Ասլանը եւ, նրա մահճակալի վրայից անկողինը մի կողմ հաւաքելով, նստեց մերկ տախտակի վրայ, ինձ եւս հրաւիրեց տեղաւորուել իր մօտ: